

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԳԱՐՈՒՋՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ ԱՐԱՅԻ**

**ՀԱՅՏԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԺԲ.00.03 Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2023**

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**

**КРИСТИНЕ АРАЕВНА ГАБУЗЯН**

**ГРАЖДАНСКО-ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ИСКОВОЙ  
ДАВНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

**АВТОРЕФЕРАТ**

**диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.03 – Частное право: гражданское право; торговое (коммерческое) право; международное частное право; семейное право; трудовое право; право социального обеспечения.**

**ЕРЕВАН-2023**

**Ատենախոսության թեման հաստատվել է  
Երևանի պետական համալսարանում**

**Գիտական ղեկավար՝**

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
**Վահրամ Դավիթի Ավետիսյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
**Արմեն Մերուժանի Հայկյան**

իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

**Գրիգոր Հովհաննեսի Բեքմեզյան**

**Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2023 թվականի դեկտեմբերի 19-ին ժ. 14<sup>30</sup>-ին ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2023 թվականի նոյեմբերի 16-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական**

**քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ**

**ժ. Ա. Ստեփանյան**

**Тема диссертации утверждена в  
Ереванском государственном университете**

**Научный руководитель:**

доктор юрид. наук, профессор

**Ваграм Давидович Аветисян**

**Официальные оппоненты:**

доктор юрид. наук, профессор

**Армен Меружанович Айкянц**

кандидат юрид. наук, доцент

**Григор Оганесович Бекмезян**

**Ведущая организация:**

**Российско-Армянский университет**

Защита состоится 19 декабря 2023 года в 14<sup>30</sup> часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 16 ноября 2023 года.

**Ученый секретарь специализированного совета:**

**кандидат юридических наук, ассистент**

**Ж. А. Степанян**

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Հայցային վաղեմությունը, լինելով քաղաքացիական իրավունքի կենտրոնական, հիմնարար ինստիտուտներից մեկը, առանձնակի կարևորություն ունի՝ հատկապես նկատի ունենալով նրա փոխկապակցվածությունը քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող մյուս ինստիտուտների հետ:

Թեպետ հայցային վաղեմությունը քաղաքացիական իրավունքին առավել վաղ (դեռևս հին հռոմեական իրավունքի ժամանակաշրջանից) հայտնի ինստիտուտներից է, այնուամենայնիվ մինչև օրս հայցային վաղեմության վերաբերյալ առկա կարգավորումները տարընկալումների, տարատեսակ մեկնաբանությունների տեղիք են տալիս, ինչի վկայությունն է նաև ոչ միատեսակ, հաճախ հակադիր դիրքորոշումներ արտահայտող դատական պրակտիկան. խնդիրներ են առաջանում հայցային վաղեմության ժամկետների ճիշտ հաշվարկման, որոշ իրավահարաբերությունների նկատմամբ դրանց կիրառելիության հետ կապված և այլն:

Մինչդեռ, նման անորոշությունն անընդունելի է հատկապես նկատի ունենալով հայցային վաղեմության ինստիտուտի նշանակությունը, դրա ազդեցությունը իրավունքների պաշտպանությունն իրականացնելու հնարավորության վրա:

Բացի այդ, չնայած հայցային վաղեմության՝ հնագույն ինստիտուտ լինելուն, դրան նվիրված կարգավորումները ժամանակի ընթացքում մնացել են գրեթե անփոփոխ, ինչը խնդրահարույց է զարգացող և արագ փոփոխվող քաղաքացիական իրավահարաբերությունների պարագայում:

Նման մոտեցման հետևանք է օրենսդրական բացերի, միմյանց հակասող օրենսդրական կարգավորումների առկայությունը: Մինչդեռ, հայցային վաղեմության ինստիտուտը, միտված լինելով հանրային ու անձնային շահերի միջև հավասարակշռությունն ապահովելուն, պետք է ժամանակի պահանջներին համահունչ փոփոխությունների ենթարկվել՝ նշված նպատակի իրականացումն ապահովելու տեսանկյունից (ըստ անհրաժեշտության նոր կանոններ մտցնելու և հնացած նորմերից ազատվելու միջոցով): Նշված հարցում անհետևողականության ցուցաբերման արդյունք է այն, որ Քաղաքացիական օրենսգրքում առկա են հայցային վաղեմությունը կարգավորող մի շարք նորմեր, որոնք խորհրդային ժամանակաշրջանի մնացուկներ են և այլևս գործնական կիրառություն չունեն:

Նման իրողությունն անհրաժեշտություն է առաջացնում գիյոտինի կամ

Օկամմի սայրի սկզբունքի կիրառմամբ վերանայել հայցային վաղեմության ինստիտուտի կարգավորումները, քանի որ այն, ինչը համահունչ ու ակտուալ էր մի ժամանակաշրջանում տիրող սոցիալ-տնտեսական պայմաններում, այլևս այդպիսին չէ մեր օրերում:

Այս ամենը վկայում է իրավահարաբերության կողմերի, քաղաքացիական շրջանառության մասնակիցների և ողջ հանրության շահերին համահունչ և իրավական որոշակիությանը համապատասխանող կարգավորումների նախատեսման հրատապության մասին, ինչն էլ՝ վերը նշված մյուս խնդիրների հետ պայմանավորում է հայցային վաղեմության ինստիտուտի համալիր ուսումնասիրության անհրաժեշտությունը, ուստիև թեմայի արդիականությունը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակն է բացահայտել հայցային վաղեմության ինստիտուտի անհրաժեշտությունը, վեր հանել հիմնախնդիրները և առաջարկել կարգավորումներ ու մեկնաբանություններ, որոնք համահունչ կլինեն ներկայիս իրավական համակարգին, շրջանառության պահանջներին և կբացառեն հակասական իրավակիրառ պրակտիկան: Նշված նպատակն էլ պայմանավորում է հետևյալ խնդիրների առաջադրումը.

- բացահայտել հայցային վաղեմության ինստիտուտի էությունն ու նպատակները,
- ուսումնասիրել հայցային վաղեմության ինստիտուտի կիրառության սահմանները, վեր հանել առկա կարգավորումների պարագայում առաջացող խնդիրները,
- վերլուծել հայցային վաղեմության ժամկետի ազդեցությունը իրավահարաբերությունների վրա, ժամկետը լրանալու իրավական հետևանքները,
- բացահայտել տարբեր բնույթի պահանջների նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի կիրառության հնարավորությունն ու առանձնահատկությունները,
- բացահայտել հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբը ճիշտ որոշելու հետ կապված խնդիրները,
- վերլուծել հայցային վաղեմության ժամկետները կասեցնելու, ընդհատելու և վերականգնելու հիմքերը, բացահայտել նշված ինստիտուտների տարբերություններն ու սահմանազատման անհրաժեշտությունը,
- ներկայացնել պրակտիկայի պահանջներին համահունչ առաջարկներ՝ միտված վեր հանված խնդիրների լուծմանը:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտն են հայցային վաղեմության ինստիտուտի հետ կապված հասարակական հարաբերությունները, իսկ առարկան՝ հայցային վաղեմության ինստիտուտին առնչվող կարգավորումները, դատական պրակտիկայում արտահայտված դիրքորոշումները, դրանց կիրառության ընթացքում ծագող հիմնախնդիրները:

**Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը:** Հայրենական իրավագիտության մեջ հայցային վաղեմությանը նվիրված միակ աշխատությունը պատկանում է Ա. Ա. Գևորգյանի գրչին: Դրանից զատ հայցային վաղեմության ինստիտուտը՝ որպես քաղաքացիական իրավունքի առանձին ինստիտուտ, առկա տեսական և գործնական հիմնախնդիրները առանձին համալիր ուսումնասիրության առարկա չեն դարձվել:

Հայկական և օտարերկրյա գրականությունում հայցային վաղեմության ինստիտուտին իրենց աշխատություններում ընդհանուր գծերով անդրադարձել են այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Վ. Դ. Ավետիսյանը, Տ. Կ. Բարսեղյանը, Ա. Մ. Հայկյանը, Մ. Մ. Ագարկովը, Բ. Մ. Գոնգալոն, Մ. Ա. Գուրվիչը, Ա. Մ. Էրդելևսկին, Վ. Ա. Թարխովը, Օ. Ս. Իոֆֆեն, Ա. Գ. Կարապետովը, Դ. Ի. Մեյերը, Օ. Ն. Սադիկովը, Ա. Պ. Սերգենը, Ե. Ա. Սուխանովը, Յու. Կ. Տոյստոյը և այլք:

Բացի այդ, հայցային վաղեմության ինստիտուտին առնչվող առանձին հարցերին նվիրված աշխատանքներ են հրապարակել Ե. Ա. Կրաշենինսկիովը, Մ. Յա. Կիրիլովան, Գ. Տ. Սլանովը, Մ. Գ. Ռոզենբերգը, Օ. Գ. Գոլյատոն, Կ. Յու. Լեբեդևան, Ա. Վ. Լյուշնյան, Ս. Սարբաշը, Ս. Վ. Սոլդատենկոն, Ի. Բ. Նովիցկին, Էնդրյու Վիստրիչը, Թեյլոր Օչոան, Ջեյք Հերդը և այլոք:

Այսպիսով, թեև հայցային վաղեմության խնդիրներին մշտապես մեծ ուշադրություն է դարձվել, այնուամենայնիվ, դրանց անդրադարձ չի կատարվել ընդհանուր իրավական կարգավորումներին և փոփոխվող շրջանառության պահանջներին համահունչ լինելու տեսանկյունից:

**Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը:** Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմել Սահմանադրությունը, Քաղաքացիական օրենսգիրքը, Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը և այլ իրավական ակտեր, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի,

ընդհանուր իրավասության դատարանների ակտերը, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի Հանրապետության, Լիտվայի Հանրապետության, Լեհաստանի Հանրապետության և այլ երկրների՝ հայցային վաղեմությանն առնչվող իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերը և դատական պրակտիկան:

**Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը:** Հետազոտության մեթոդոլոգիական հիմքն են կազմել թե՛ ընդհանուր գիտական և թե՛ մասնավոր գիտական մեթոդները: Մասնավորապես, կիրառվել են ընդհանուր գիտական այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են ինդուկցիան, դեդուկցիան, անալիզը, սինթեզը, համակարգակառուցվածքային մեթոդը և այլն, ինչպես նաև մասնավոր գիտական՝ իրավահամեմատական, ձևական իրավաբանական, իրավական մոդելավորման և այլ մեթոդներ:

**Հետազոտության գիտական նորույթը:** Ատենախոսության գիտական նորույթը նրանում է, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ համակողմանի ուսումնասիրության և վերլուծության առարկա են դառնում հայցային վաղեմության ինստիտուտին առնչվող հիմնախնդիրները: Տեսության մեջ արտահայտված կարծիքների, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա օրենսդրության, միջազգային իրավական կարգավորումների, դատական պրակտիկայի վերլուծության հիման վրա բացահայտվել է հայցային վաղեմության էությունը, նորովի են ձևակերպվել հայցային վաղեմության ինստիտուտի նպատակները՝ արդի իրավական համակարգին համահունչ, հայցային վաղեմության հասկացությունը: Աշխատանքում առաջարկվել են տեսության մեջ և գործնական կիրառության ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծման նոր մոտեցումներ, կառուցակարգեր: Արդյունքում կատարվել են ինչպես տեսական եզրահանգումներ, այնպես էլ օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում և գործնական առաջարկություններում:

### **Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ «սուբյեկտիվ իրավունք» և «շահ» կատեգորիաները

սահմանազատված են և դիտվում են որպես պաշտպանության ինքնուրույն օբյեկտներ: Մինչդեռ հայցային վաղեմության՝ օրենսդրությամբ ամրագրված հասկացությունը վերջինիս կիրառությունը տարածում է միայն խախտված իրավունքների պաշտպանության դեպքերի վրա: Նման մոտեցման պարագայում, դիցուք, շահերի պաշտպանության նկատմամբ հայցային վաղեմության ժամկետները չկիրառելը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, որ իր շահը պաշտպանող անձը պաշտպանության ավելի լայն հնարավորություններ ունենա, քան նույնական իրավիճակում գտնվող սուբյեկտիվ իրավունքի կրողը, ինչը կլինե՞ր անարդար և անտրամաբանական:

Ուստի, առաջարկվել է հայցային վաղեմությունը կիրառել նշված կատեգորիաներից յուրաքանչյուրի պաշտպանությանն ուղղված պահանջներով: Իսկ որպես հայցային վաղեմության կիրառելիության չափանիշ պետք է դիտվի պարտավոր անձի շահը՝ նկատի ունենալով այն, որ հայցային վաղեմությունը պարտավոր անձի շահերի պաշտպանությանն ուղղված ինստիտուտ է. եթե անձը, հայցային վաղեմություն վկայակոչելով հետապնդում է իր օրինական շահը պաշտպանելու նպատակ, ապա հայցային վաղեմություն պետք է կիրառվի, իսկ հայցը՝ մերժվի:

2. Ուսումնասիրելով իրավունքների պաշտպանության յուրիսդիկցիոն և ոչ յուրիսդիկցիոն միջոցների առնչությամբ առկա օրենսդրական կարգավորումները՝ հիմնավորվել է, որ հայցային վաղեմության ինստիտուտի էության և նպատակների լիարժեք իրացումն ապահովելու տեսանկյունից հայցային վաղեմության ինստիտուտի կիրառությունը պետք է տարածել իրավունքների պաշտպանության թե՛ յուրիսդիկցիոն և թե՛ ոչ յուրիսդիկցիոն ձևերի նկատմամբ:

Առկա օրենսդրական կարգավորումները, լինելով ոչ հստակ, թույլ չեն տալիս միանշանակ եզրահանգումներ անել հայցային վաղեմության ինստիտուտի կիրառելիության մասին և դրանով իսկ կողմերի իրավունքների սահմանափակման ռիսկեր են պարունակում. անձը, հստակ պատկերացում չունենալով պաշտպանության այս կամ այն ձևի նկատմամբ հայցային վաղեմության կիրառելիության մասին, չի կարող կանխորոշել իր վարքագիծը՝ դրանից բխող հետևանքներով:

Հայցային վաղեմության ժամկետի լրանալով՝ պարտապանի մոտ ծագում է իր՝ պարտատիրոջ անտարբերության արդյունքում ձևավորված փաստացի դրությունը պահպանելու շահ, որն իր գոյությունը պահպանում է և պաշտպանության կարիք ունի անկախ նրանից, թե պաշտպանության ինչ

ձև կամ եղանակ է նախընտրել մյուս կողմը: Ուստի նման պաշտպանությունից զրկող ցանկացած կարգավորում հանգեցնում է կողմի իրավունքների անհամաչափ սահմանափակման և շահերի ոտնահարման: Բացի այդ, նման մոտեցումը չի բխում նաև կայունությունն ապահովելու հարցում առկա հանրային շահից:

Դրանով պայմանավորված՝ առաջարկվել է նաև «հայցային վաղեմության ժամկետ» եզրույթը փոխարինել «պաշտպանության վաղեմության ժամկետ» եզրույթով՝ արտացոլելու այն, որ վաղեմության ժամկետի սահմանափակումը վերաբերում է դատական պաշտպանությունից զատ նաև հարկադիր պաշտպանության այլ ձևերին:

3. Հաշվի առնելով հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո իրավունքի գոյությունը պահպանելու արդյունքում առաջացող հնարավոր հետևանքները, մասնավորապես՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտն անտեսելու, քաղաքացիական իրավահարաբերություններում անորոշություն առաջացնելու, շրջանառության կայունությունը խաթարելու հետ կապված հնարավոր վտանգները, առաջարկվել է նախատեսել, որ վաղեմության ժամկետը լրանալուց հետո կողմն իրավասու է դիմել դատարան այդ հիմքով իրավահարաբերությունը դադարած համարելու պահանջով:

Նման կարգավորումը նախականիչ նշանակություն ունի նաև ինքնապաշտպանությունն արգելելու համատեքստում:

Ինքնապաշտպանության միջոցների նկատմամբ հայցային վաղեմություն տարածելու դեպքում, կողմերի շահերի հավասարակշռությունն ու հայցային վաղեմության ինստիտուտի նպատակներն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, առաջարկվել է նախատեսել, որ վաղեմության ժամկետը լրանալուց հետո կողմն իրավասու է դիմել դատարան այդ հիմքով իրավահարաբերությունը դադարած համարելու, ինչպես նաև ինքնապաշտպանությանն ուղղված գործողություններն (անգործությունը) դադարեցնելու և դրա արդյունքում ձեռք բերածը վերադարձնելու միջնորդությամբ:

Ընդ որում, ելնելով կայունությունը և շահերի հավասարակշռությունն ապահովելու անհրաժեշտությունից՝ այս դեպքում ևս հնարավորինս պետք է բացառվի ստացածը որպես անհիմն հարստացում հետ պահանջելու հնարավորությունը (անհիմն հարստացման վերադարձը, խաթարելով շրջանառության կայունությունը, հակասում է հայցային վաղեմության ինստիտուտի էությանն ու նպատակին)՝ որպես բացառություն նախատեսելով այն դեպքը, երբ անձը որպես պաշտպանություն վկայակոչել է



հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելը (կամ պայմանագրով արգելել է նման բնույթի գործողությունները), իսկ մյուս կողմն էլ, չնայելով դրան, դիմել է հարկադիր պաշտպանության:

Միևնույն ժամանակ, շրջանառության կայունության խաթարման ռիսկերը նվազեցնելու նպատակով առաջարկվել է այդպիսի պահանջների նկատմամբ սահմանել հատուկ՝ ընդհանուրի համեմատ կրճատ հայցային վաղեմության ժամկետ (ողջամիտ կարող է համարվել վեցամսյա հայցային վաղեմության ժամկետի սահմանումը):

Հենց սա է այն օպտիմալ տարբերակը, որը հնարավորություն է տալիս առավել քիչ խաթարել կայունությունն ու առավելագույնս ապահովել կողմերի շահերի հավասարակշռությունը:

4. Հայցային վաղեմության ժամկետը կասեցնելու և վերականգնելու հիմքերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ չնայած առկա որոշ տարբերություններին, թե՛ կասեցման ու թե՛ վերականգնման իրավական հետևանքը նույնն է, և ուստի ըստ էության բացակայում է դրանք առանձնացնելու անհրաժեշտությունը:

Վերականգնման՝ ուղղորդիչ նշանակություն ունեցող հիմքերի թվարկը ցույց է տալիս, որ դրանք օժտված չեն բավականաչափ հստակությամբ և պրակտիկայում ավելի շատ խնդիրներ են առաջացնում՝ հանգեցնելով նորմի սահմանափակ մեկնաբանման ու արդյունքում սահմանափակ կիրառման:

Բացի այդ, կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վերականգնման համար անհրաժեշտ համարվող այնպիսի պայմաններ, ինչպիսին այդ հանգամանքների՝ անձի հետ կապված լինելն է, միայն ֆիզիկական անձի կողմից միջնորդություն ներկայացնելը, իրականում պետք է բացառվեն, իսկ մյուս պայմանները՝ հանգամանքների բացառիկությունն ու հարգելիությունը, ինչպես նաև այդ հանգամանքների տեղի ունենալը հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում (իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում), լիովին տեղավորվում են կասեցման հիմքերին ներկայացվող պահանջներում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվել է հրաժարվել հայցային վաղեմության ժամկետի վերականգնման ինստիտուտից, իսկ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՔՕ) 339-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել առանձին կետով, որի համաձայն հայցային վաղեմության ժամկետի ընթացքը համարվում է կասեցված, եթե իրավունքի պաշտպանության իրականացմանն արգելք է հանդիսացել անձի կամքից անկախ և

անկանխելի բացառիկ հանգամանք:

Բացի այդ, կատարված վերլուծությամբ հեղինակը եզրահանգել է, որ բացակայում է նաև հայցային վաղեմության ժամկետը ընդհատելու դեպքում վերսկսելու այնպիսի հիմք առանձնացնելու անհրաժեշտությունը, ինչպիսին հայց հարուցելն է: Նախ, հայցային վաղեմության վերսկսման իրավական հետևանքը ծագում է միայն հայցն առանց քննության թողնելու պարագայում: Սակայն, նման պարագայում, երբ ըստ էության վեճը չի վերացել, անհասկանալի է հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը նորից սկսելը: Ուստի, առանց քննության թողնելու պարագայում ևս փաստացի պետք է տեղի ունենա հայցային վաղեմության ժամկետի կասեցում, այլ ոչ թե ընդհատում, հետևաբար հարկ է հայց հարուցելը դիտել ոչ թե ընդհատման, այլ կասեցման հիմք:

5. Նկատի ունենալով, որ քանի դեռ հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելը չի վկայակոչվում, պարտավորությունը համարվում է գոյություն ունեցող, և պարտքի ճանաչումը նույնպիսի ակնկալիքներ է ձևավորում իրավագործ անձի մոտ անկախ այդպիսին կատարվելու ժամանակից՝ առաջարկվել է պարտքի ճանաչումը վկայող գործողություններին իրավական նշանակություն տալ ոչ միայն այն պարագայում, երբ դրանք տեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի ընթացքում, այլև դրա սահմաններից դուրս:

Հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո կատարված պարտքի ճանաչմանը նշանակություն տալը կարևոր է նաև շրջանառության մյուս մասնակիցների համար. այն հեշտացնում է քաղաքացիական իրավահարաբերություններում օբյեկտների շրջանառությունը, ապահովում է որոշակիություն ու հստակություն նաև երրորդ անձանց համար: Մինչդեռ, հակառակ մոտեցումը կարող է գործնականում խնդիրներ առաջ բերել՝ ընդհուպ հանգեցնելով պարտքի ճանաչման կառուցակարգից հրաժարման՝ նկատի ունենալով այն անորոշությունը, որն առկա է ներկայումս (առկա կարգավորումները, զուրկ լինելով հստակությունից, թույլ չեն տալիս պարտատիրոջը հասկանալ, թե պարապանի ինչպիսի գործողություններին պետք է նշանակություն տալ և երբ կարելի է անհոգություն դրսևորել, իսկ երբ՝ ոչ, իսկ պարտապանին էլ թույլ չեն տալիս հասկանալ՝ ինչպիսի գործողություններից ձեռնպահ մնալ, եթե չի ցանկանում ընդունել պարտքը):

Ուստի, առաջարկվում է ցանկացած գործողություն, որը թույլ է տալիս հաստատել, որ պարտապանը ճանաչել է իրեն կրեդիտորի նկատմամբ

պարտավոր և հայտնել կամահայտնություն կատարելու իր պարտավորությունը, դիտել որպես պարտքի ճանաչում՝ անկախ նրանից, թե երբ է այն կատարվել:

Այսպիսով, ՔՕ 340-րդ հոդվածի 1-ին մասը առաջարկվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. Հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայցը հարուցելով:

2. Հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվում է նորից պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողություններ կատարելով:»:

6. Հայցային և ձեռքբերման վաղեմության ժամկետների առկա կարգավորումների հնարավոր ռիսկերը ուսումնասիրելով, կարծում ենք՝ նպատակահարմար է սեփականատիրոջը թույլատրել վինդիկացիոն հայցի ներկայացումն այնքան ժամանակ, քանի դեռ մեկ այլ անձի մոտ չեն ծագել ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի առաջացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ հայցային վաղեմությունը պաշտպանում է պարտավոր անձի շահը, այն դեպքում, երբ պարտավոր անձն իրականում շահ չունի կամ էլ օրենքի ուղղակի ցուցումով բացառվում է նման շահի ձևավորումը, հայցային վաղեմության ժամկետի կիրառությունը պետք է բացառել: Այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետը չպետք է տարածել սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի խախտման վերացման պահանջների վրա, եթե այդ խախտումները կապված չեն եղել գույքն այլ անձի տիրապետմանն անցնելու հետ՝ հաշվի առնելով նաև տիրապետումը հետագայում օրինականացնելու հնարավորությունը՝ նման կերպ բացառելով հայցային վաղեմության ժամկետի կիրառումն այն դեպքում, երբ գույքի փաստացի տիրապետողի մոտ չի կարող առաջանալ սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

7. Ընդունելով այն մոտեցումը, որ սեփականության իրավունքի ճանաչման հայցերի դեպքում ևս կարող է հայցային վաղեմության կիրառության հարց առաջ գալ, առաջարկվում է հայցային վաղեմության կիրառելի լինելու հարցը լուծելիս որպես չափանիշ դիտել ոչ միայն իրավունքի խախտված կամ վիճարկվող լինելու փաստը, այլև այն, թե ինչպիսի ակնկալիք կարող է ձևավորվել արդյունքում, քանի որ անգամ եթե առկա է իրավունքի խախտման փաստ, հայցային վաղեմության կիրառության հարց չի կարող առաջ գալ, եթե անձի մոտ չի ձևավորվել փաստացի դրությանն ապավինելու օրինական ակնկալիք: Եվ քանի որ

միայն տիրապետման իրավագործության նկատմամբ անտարբերությունն է, որ կարող է սեփականության իրավունքից հրաժարվելու վկայություն լինել և հիմք՝ մյուս կողմի մոտ իր փաստացի տիրապետման կապակցությամբ ակնկալիքի ձևավորման համար, այդ իսկ պատճառով բոլոր այն դեպքերում, երբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջն ուղղված է ոչ թե փաստացի, այլ իրավաբանական բնույթի խոչընդոտների վերացմանը, այն է՝ տնօրինման իրավագործությանն առնչվող խախտումը վերացնելուն, հայցային վաղեմության ժամկետի կիրառությունը պետք է բացառվի: Այսպես, հայցային վաղեմությունը չի տարածվում նաև սեփականության իրավունքի ճանաչմանն ուղղված պահանջների վրա, եթե դրանք ուղղված են միայն տնօրինման իրավագործությանն առնչվող խախտումները վերացնելուն:

### **Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:**

Հետազոտության տեսական նշանակությունը հայցային վաղեմության ինստիտուտի համալիր և խորը վերլուծությունն է, ինստիտուտի զարգացման հիմնական միտումները վեր հանելն ու այնպիսի մեկնաբանություններ ու կարգավորումներ առաջարկելը, որոնք թույլ կտան կիրառել նշված ինստիտուտը՝ շրջանառության պահանջներին և հայցային վաղեմության նպատակներին ու էությանը համահունչ:

Ատենախոսությունում ներկայացված վերլուծությունները, մեկնաբանությունները, եզրահանգումները և դրանց հիման վրա արված առաջարկությունները կարող են կարևոր նշանակություն ունենալ քաղաքացիական իրավունքի գիտության զարգացման համար: Ատենախոսությունում արված վերլուծությունները լրացնում են հայցային վաղեմության տեսությունը, իսկ հետազոտության արդյունք հանդիսացող եզրահանգումները կարող են օգտագործվել հարցին նվիրված հետազոտումնափորձություններում, քննարկումներում, ուսումնական գործընթացում, իրավաստեղծ գործունեության ոլորտում օրենսդրության կատարելագործման, դրանում առկա բացերը, թերություններն ու հակասությունները վերացնելու համար, ինչպես նաև իրավակիրառ գործունեության մեջ միասնական, հակասություններից զերծ դատական պրակտիկա ձևավորելու համար:

**Ատենախոսության արդյունքների փորձարկումը:** Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն ամփոփված են հեղինակի գիտական հոդվածներում, որոնք հրատարակվել են գիտական

ամսագրերում և ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են գիտական զեկույցների շրջանակներում:

**Աշխատանքի կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, դրանցում ամփոփված տասը պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության՝ **«Հայցային վաղեմության ինստիտուտի ընդհանուր բնութագիրը» վերտառությամբ առաջին գլխում** ներկայացվել են հայցային վաղեմության ինստիտուտի էությունն ու նպատակները, ուսումնասիրվել են հայցային վաղեմության հասկացությունն ու ինստիտուտին բնորոշ հատկանիշները:

**Երկրորդ գլուխը՝ «Հայցային վաղեմության ինստիտուտի կիրառումը»** վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից:

**«Հայցային վաղեմության կիրառումն իրավունքների պաշտպանության յուրիսդիկցիոն միջոցների և ինքնապաշտպանության դեպքում»** վերտառությամբ 2.1 պարագրաֆում ուսումնասիրվել է դատականից զատ իրավունքների պաշտպանության այլ ձևերի՝ յուրիսդիկցիոն և ոչ յուրիսդիկցիոն, պարագայում հայցային վաղեմության ինստիտուտի կիրառման հնարավորությունը, ներկայացվել են համապատասխան օրենսդրական փոփոխությունների առաջարկներ:

**«Հայցային վաղեմության ժամկետը լրանալու իրավական հետևանքները»** վերտառությամբ 2.2 պարագրաֆում ուսումնասիրվել են հայցային վաղեմության ժամկետը լրանալու իրավական հետևանքները, մասնավորապես՝ դրա ազդեցությունը սուբյեկտիվ իրավունքի գոյության և իրավահարաբերության օբյեկտ հանդիսացող գույքի ճակատագրի վրա, և ներկայացվել են համապատասխան եզրահանգումներ:

**Երրորդ գլուխը՝ «Հայցային վաղեմության ժամկետի ընթացքը»** վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆից:

**«Հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվելը»** վերտառությամբ 3.1 պարագրաֆում անդրադարձ է կատարվել հայցային վաղեմության ժամկետի հոսքի սկիզբը ճիշտ որոշելու հիմնախնդրին, և հիմնավորվել է հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբը սահմանող կանոնը հստակեցնելու անհրաժեշտությունը:

**«Հայցային վաղեմության ժամկետը կասեցնելը»** վերտառությամբ 3.2 պարագրաֆում վերլուծվել են հայցային վաղեմության ժամկետը կասեցնելու հիմքերը, հիմնավորվել է որոշ հիմքեր հանելու և նոր հիմքեր ավելացնելու անհրաժեշտությունը:

**«Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելը»** վերտառությամբ 3.3 պարագրաֆում հետազոտվել են հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու համար անհրաժեշտ պայմանները, զուգահեռներ են անցկացվել հայցային վաղեմության ժամկետը կասեցնելու ինստիտուտի հետ, և հիմնավորվել է հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու առանձին ինստիտուտի անհրաժեշտության բացակայությունը:

**«Հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատվելը»** վերտառությամբ 3.4 պարագրաֆում ուսումնասիրվել են հայց ներկայացնելու հիմքով հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվելու և հոսքը վերսկսելու, ինչպես նաև պարտքի ճանաչման ինստիտուտի առանձնահատկությունները, և առաջարկվել է կատարել օրենսդրական փոփոխություններ՝ նորմերի հստակությունն ու իրավական որոշակիությունն ապահովելու նպատակով:

**Չորրորդ գլուխը՝ «Հայցային վաղեմության կիրառությունը առանձին պահանջներով»** վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆից:

**«Հայցային վաղեմությունը վինդիկացիոն ու նեգատոր հայցերով»** վերտառությամբ 4.1 պարագրաֆում ուսումնասիրվել են վինդիկացիոն և նեգատոր հայցերի դեպքում հայցային վաղեմության ժամկետը կիրառելու առանձնահատկությունները, առաջարկվել է հստակեցնել վինդիկացիոն հայցերով հայցային վաղեմության ժամկետը կիրառելու պայմանները:

**«Հայցային վաղեմությունը սեփականության իրավունքի ճանաչման հայցերով»** վերտառությամբ 4.2 պարագրաֆում անդրադարձ է կատարվել սեփականության իրավունքի ճանաչման հայցերով հայցային վաղեմության ժամկետի կիրառման հնարավորությանը, ձևակերպվել են կիրառելիության հարցը որոշելու հիմնական չափանիշները:

**«Հայցային վաղեմությունը սեփականատիրոջ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքները խախտող պետական մարմնի կամ դրանց պաշտոնատար անձանց ակտն անվավեր ճանաչելու մասին պահանջներով»** վերտառությամբ 4.3 պարագրաֆում ուսումնասիրվել են նորմատիվ և ոչ նորմատիվ բնույթի իրավական ակտերն անվավեր ճանաչելու համար սահմանված ժամկետները և դրանց բնույթը:

**«Հայցային վաղեմությունը ավանդները վերադարձնելու պահանջներով»** վերտառությամբ 4.4 պարագրաֆում անդրադարձ է կատարվել ավանդատուների կողմից ավանդները վերադարձնելու վերաբերյալ բանկին ներկայացվող պահանջների նկատմամբ հայցային վաղեմությունը տարածելու հիմնախնդրին:

**Ատենախոսության եզրակացությունում** ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները՝

1. Հայցային վաղեմության ինստիտուտի՝ ավանդաբար առանձնացվող նպատակների ուսումնասիրության արդյունքում գալիս ենք եզրահանգման, որ հայցային վաղեմության միակ նպատակը քաղաքացիական շրջանառության կայունությունն ապահովելն է. հայցային վաղեմությունը պաշտպանում է շրջանառությունը նրան խորթ այնպիսի երևույթներից, ինչպիսին անորոշությունն է և անկայունությունը: Հնարավորություն ընձեռելով պարտապանին որոշակի ժամանակ անց իրեն ազատ համարել պարտականություններից՝ հայցային վաղեմությունը խթանում է գործարար հարաբերություններն ու տնտեսական շարժը՝ այդ կերպ պաշտպանելով նաև հանրային շահը:

Իսկ գրականության մեջ մատնանշված մյուս նպատակները, մասնավորապես՝ ապացուցողական գործընթացը հեշտացնելը, օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու հնարավորություն ընձեռելը, քաղաքացիական շրջանառության մասնակիցներին կարգավարժելը, դատարանների աշխատանքի ծանրաբեռնվածությունը թեթևացնելը, անձին պատժելը, ոչ թե հայցային վաղեմության ինստիտուտի նպատակներ, այլ միայն ինստիտուտի առկայության փաստով կամ կիրառության արդյունքում վրա հասնող հետևանքներ են:

2. Իրավունքների պաշտպանության յուրիսդիկցիոն և ոչ յուրիսդիկցիոն միջոցների նկատմամբ հայցային վաղեմության ինստիտուտի կիրառությունը տարածելու վերաբերյալ եզրահանգումը պայմանավորում է նաև մի շարք օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն: Մասնավորապես, ի կատարումն վերոգրյալի առաջարկում ենք «հայցային

վաղեմության ժամկետ» եզրույթը փոխարինել «պաշտպանության վաղեմության ժամկետ» եզրույթով՝ արտացոլելու այն, որ վաղեմության ժամկետի սահմանափակումը վերաբերում է դատական պաշտպանությունից զատ նաև հարկադիր պաշտպանության այլ ձևերին:

Այսպիսով, առաջարկում ենք ՔՕ 331-րդ հոդվածում ամրագրել վաղեմության հետևյալ սահմանումը՝

***Հոդված 331. Պաշտպանության վաղեմություն հասկացությունը***

***Պաշտպանության վաղեմություն է համարվում իրավունքը կամ շահը խախտված անձի իրավունքի կամ շահի պաշտպանության ժամանակահատվածը:***

Բացի այդ, հաշվի առնելով վաղեմության ժամկետը ինքնապաշտպանության, ինչպես նաև վեճեր քննող բոլոր մարմինների կողմից կիրառելու իրավասություն վերապահելու անհրաժեշտությունը, հարկ է փոփոխություններ կատարել ՔՕ 335-րդ հոդվածում. մասնավորապես շարադրել այն հետևյալ խմբագրությամբ՝

***Հոդված 335. Պաշտպանության վաղեմությունը կիրառելը***

1. Իրավունքի պաշտպանության մասին պահանջը ***իրավասու մարմինը*** քննության է ընդունում ***պաշտպանության վաղեմության*** ժամկետը լրանալուց անկախ:

2. ***Իրավասու մարմինը պաշտպանության վաղեմությունը*** կիրառում է միայն վիճող կողմի դիմումով:

***Պաշտպանության վաղեմության ժամկետի*** լրանալը, որի կիրառման մասին օրենքով սահմանված կարգով դիմում է վիճող կողմը, հիմք է ***իրավասու մարմնի*** կողմից ***պահանջը*** մերժելու համար:

Ինքնապաշտպանության դեպքում հայցային վաղեմության կիրառությունն ապահովելու տեսանկյունից հարկ է ՔՕ 1099-րդ հոդվածում նախատեսել, որ ***անհիմն հարստացում չի համարվում*** և ենթակա չէ վերադարձման ***պաշտպանության վաղեմության ժամկետի*** ավարտից հետո ի կատարումն պարտավորության տրված ***կամ ձեռք բերված*** գույքը (***բացառությամբ պաշտպանության վաղեմության ժամկետի լրացած լինելու մասին հայտարարելուց հետո առանց համաձայնության ձեռք բերված գույքի***):

Բացի այդ, պարտապանի կողմից վաղեմության ժամկետի լրանալը որպես ինքնապաշտպանության դեմ առարկության միջոց օգտագործելը երաշխավորելու և նման առարկությունն անտեսելու արդյունքում մյուս կողմի ձեռք բերածը որպես անհիմն հարստացում հետ պահանջելու



հնարավորությունն ապահովելու տեսանկյունից, հարկ է լրացում կատարել 335-րդ հոդվածում՝ ավելացնելով 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝

**3. Պաշտպանության վաղեմության ժամկետը լրանալուց հետո կողմն իրավասու է դիմել դադարան այդ հիմքով իրավահարաբերությունը դադարած համարելու, ինչպես նաև ինքնապաշտպանությանն ուղղված գործողություններն (անգործությունը) դադարեցնելու և դրա արդյունքում ձեռք բերածը վերադարձնելու միջնորդությամբ: Պարտապանն իրավունք ունի ինքնապաշտպանությանն ուղղված գործողություններն (անգործությունը) դադարեցնելու և դրա արդյունքում ձեռք բերածը վերադարձնելու պահանջ ներկայացնել վեցամսյա ժամկետում՝ այն օրվանից, երբ իմացել է կամ պետք է իմացած լիներ ինքնապաշտպանության մասին:**

3. Նկատի ունենալով, որ անձն իր իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացնել միայն այն դեպքում, երբ իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին, ընդունելի է հայցային վաղեմության ժամկետի հոսքը սուբյեկտիվ գործոնի՝ իրավունքի խախտման մասին իմանալու պահի հետ կապելու ընդհանուր կանոնը:

Քանի որ հայցային վաղեմությունը պարտատիրոջ անտարբերության արդյունքում ձևավորված փաստացի դրությունը պահպանելու՝ պարտապանի շահի պաշտպանության միջոց է, ուստի հայցային վաղեմության ժամկետը պետք է հոսի այն պահից, երբ սկսվում է անտարբերության դրսևորումը, այն է՝ երբ պարտատերը իմացել է իր իրավունքի խախտման մասին կամ էլ ողջամտորեն պետք է իմանար (այսինքն՝ չիմացությունը կդիտվեր անտարբերության, անփութության հետևանք, իսկ քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում անձը ողջամիտ ուշադրության դեպքում կիմանար իր իրավունքի ենթադրյալ խախտման մասին): Հակառակ պարագայում, երբ չի սկսվել անտարբերությունը, չի կարող սկսված համարվել նաև հայցային վաղեմության ժամկետի հոսքը: Ուստի, հայցային վաղեմության ժամկետի հոսքի սկիզբը պետք է կապել անտարբերության դրսևորման սկզբի հետ:

Նշված կանոնը, սակայն, կարող է պատշաճ գործել և երաշխավորել անձի պաշտպանության իրավունքի իրականացումը միայն այն դեպքում, երբ անձն իրական հնարավորություն ունի ձեռնամուխ լինելու իր իրավունքների իրականացմանը:

Ուստի իրավունքի պաշտպանության համար սահմանված ժամկետի հոսքը կարող է սկսել այն պահից, երբ անձին հայտնի են (կամ պետք է

հայտնի լինեն) իրավախախտման փաստն ու իրավունքը խախտած անձը:

Հաշվի առնելով վերոգրյալը, կարծում ենք նպատակահարմար է ՔՕ 337-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ **իրավունքի խախտման և իրավունքը խախտած անձի մասին, եթե ապացուցվել է, որ չիմացությունը կոպիտ անփութության հետևանք է:** Այդ կանոնից բացառությունները սահմանվում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով»:

4. Հայցային վաղեմության ժամկետի կասեցման հիմքերի սպառիչ ցանկի և օրենսդրական մյուս կարգավորումների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ օրենքով նախատեսված մի շարք հիմքերի պարագայում իրականում կասեցման անհրաժեշտությունը բացակայում է, և հակառակը՝ առկա են այնպիսիք, որոնք հարկ է հաժելել կասեցման հիմքերի շարքում:

Այսպես, նախ բացակայում է ՔՕ 339-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքի անհրաժեշտությունը, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի կասեցումը քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման հայցերի համար՝ կենսաթոշակ կամ նպաստ նշանակելու մասին համապատասխան մարմնին քաղաքացու դիմելով:

Այստեղ խոսքը կենսաթոշակ կամ նպաստ նշանակելու համար դիմումների ներկայացմանն է վերաբերում և ամենևին ոչ վնաս պատճառելուց բխող հարաբերություններին, որոնց առնչությամբ էլ կարող է հենց ներկայացվել կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման հայցը: Այսինքն՝ դրանք՝ կենսաթոշակ կամ նպաստ նշանակելու համար դիմումն ու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման հայցը ունեն տարբեր հիմքեր, տարբեր իրավահարաբերություններ են առաջացնում, և մեկը մյուսի իրականացման խոչընդոտ կամ նախապայման չէ, ուստի չի բացառվում դրանց միաժամանակյա իրականացումը: Հետևաբար բացակայում է նաև այդ հիմքով հայցային վաղեմության ժամկետը կասեցնելու անհրաժեշտությունը:

Վերանայման կարիք ունի նաև ՔՕ 339-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, որի համաձայն կասեցման հիմք է անգործունակ անձի՝ օրինական ներկայացուցիչ չունենալը, վերաձևակերպելով այն հետևյալ կերպ՝ կասեցման հիմք է **լրիվ գործունակությամբ չօժտված անձի՝ ներկայացուցիչ չունենալը:**

Նման ձևակերպումը կընդլայնի կասեցման հիմքի կիրառման

շրջանակը՝ դրանում ներառելով նաև անչափահասներին ու սահմանափակ գործունակություն ունեցող անձանց, որոնց իրավունքներն ու օրինական շահերը նույնպես դատարանում համապատասխանաբար ներկայացնում են նրանց ծնողները (որդեգորողները), խնամակալները կամ հոգաբարձուները, մինևնույն ժամանակ, կբացառի կասեցման ժամանակահատվածի անհիմն երկարաձգումը մինչև օրինական ներկայացուցիչ նշանակելու պահը՝ նկատի ունենալով, որ ՔՕ 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող անձի նկատմամբ, մինչև խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը, խնամակալի կամ հոգաբարձուի պարտականություններն իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:

Օրենսդրության վերլուծության արդյունքում վեր է հանվել կասեցման մի շարք այլ հիմքեր նախատեսելու անհրաժեշտություն, մասնավորապես՝ հայցային վաղեմությունը պետք է կասեցվի՝

- *ծնողների դեմ երեխաների պահանջներով՝ ծնողական իրավունքների գործողության ժամանակահատվածում,*
- *լրիվ գործունակությամբ չօժտված անձանց պահանջներով ընդդեմ խնամակալություն կամ հոգաբարձություն իրականացնող անձանց՝ խնամակալության կամ հոգաբարձության իրականացման ժամանակահատվածում,*
- *լուծարման գործընթացում կամ սնանկության վարույթում՝ պարտավորիք կողմից պահանջ ներկայացվելու պահից,*
- *պարտապանի մահվան դեպքում՝ պարտավորների պահանջները ներկայացնելու պահից մինչև իրավահաջորդի ներգրավումը,*
- *պարտավորիք մահվան դեպքում՝ պարտավորիք մահվան պահից մինչև իրավահաջորդի ներգրավումը,*
- *արբիտրաժի վճիռը կամ ֆինանսական համակարգի հաշվարարի որոշումը չեղյալ ճանաչելու, դատարանի կողմից այդ ակտերի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տրալը մերժելու, արտադատական կարգով կնքված հաշվության համաձայնության հաստատումը մերժելու դեպքում՝ ակտերը կայացնելու պահից մինչև դատարանի կողմից նշված որոշումները կայացնելու պահը:*

Ընդ որում, հարկ է նաև նախատեսել, որ հայցային վաղեմության ժամկետի հոսքը չի սկսում, քանի դեռ առկա են կասեցման հիմքերը (նկատի ունենալով, որ հայցային վաղեմության հոսքը սկսելու համար հարկ է անտարբերության առկայություն):

5. Ժառանգման իրավահարաբերությունների դեպքում հայցային

վաղեմության ժամկետի կասեցում նախատեսելը հակասության մեջ է մտնում ՔՕ 338-րդ հոդվածի հետ, որի համաձայն պարտավորության մեջ անձանց փոփոխվելը չի հանգեցնում հայցային վաղեմության ժամկետի և դրա հաշվարկման կարգի փոփոխման:

Նշված կանոնի կիրառությունը այդքան էլ միանշանակ չէ նաև իրավահաջորդության այնպիսի դեպքերում, ինչպես, օրինակ, պարտքի փոխանցումն է, որը, որպես կանոն, տեղի է ունենում միայն պարտատիրոջ համաձայնությամբ, և ըստ էության, ոչ այլ ինչ է, քան պարտքի ճանաչման դրսևորում, ուստի պետք է հանգեցնի հայցային վաղեմության ժամկետի հոսքի վերսկսմանը:

Կարծում ենք՝ իրականում նշված հոդվածի նպատակը ցույց տալն է, որ իրավահաջորդի մոտ պահպանվում են իրավանախորդի իրավունքներն ու պարտականությունները: Ուստի, նկատի ունենալով, որ պարտավորության մեջ անձանց փոփոխվելը մի դեպքում պետք է հանգեցնի հայցային վաղեմության ժամկետի կասեցման, մեկ այլ դեպքում հանգեցնում է պարտքի ճանաչման, կարծում ենք՝ ՔՕ 338-րդ հոդվածն անհրաժեշտ է վերանայել՝ ձևակերպելով հետևյալ կերպ՝ «պարտավորության մեջ անձանց փոփոխվելը չի հանգեցնում հայցային վաղեմության ժամկետի և դրա հաշվարկման կարգի փոփոխման, **եթե այլ բան չի բխում օրենքից**»:

6. Գալով եզրահանգման, որ հայցային վաղեմության վերսկսման իրավական հետևանքը ծագում է միայն հայցն առանց քննության թողնելու պարագայում, և այս դեպքում ևս փաստացի տեղի է ունենում հայցային վաղեմության ժամկետի կասեցում, առաջարկում ենք տարբերակել սահմանված կարգով և սահմանված կարգի խախտմամբ հայց ներկայացնելու դեպքերը, ընդ որում՝ բոլոր այն դեպքերում, երբ հայցադիմում ներկայացնելու ու առանց քննության թողնելու միջև նման տևական ժամանակային խզումը դատարանի (կամ միգուցե նաև պատասխանողի) մեղավորության արդյունք է, դրա բացասական հետևանքները չեն կարող դրվել հայցվորի վրա:

Ուստի, առաջարկում ենք քաղաքացիական օրենսգրքի 341-րդ հոդվածում կատարել փոփոխություն՝ սահմանելով՝

**«1. Եթե դատարանն առանց քննության է թողել սահմանված կարգի խախտմամբ ներկայացված հայցը, ապա մինչև հայցի հարուցումն սկսված հայցային վաղեմության ժամկետի ընթացքը շարունակվում է, բացառությամբ այն դեպքի, երբ հայցն առանց քննության է թողնվել մինչև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճի կարգավորման**

**օրենքով կամ պայմանագրով նախատեսված արտադարական կարգը հայցվորի կողմից պահպանված չլինելու հանգամանքին պատասխանողի կողմից հղում անելու հիմքով: Այս հիմքով, ինչպես նաև սահմանված կարգով ներկայացված հայցը առանց քննության թողնելու դեպքում հայցային վաղեմության ժամկետը համարվում է կասեցված:**

**1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ սահմանված դեպքում հայցային վաղեմության ժամկետի մեջ չի հաշվարկվում հայցադիմումն ընդունելու մասին որոշումը ստանալու կամ հայցադիմումը ընդունված համարելու պահից մինչև առանց քննության թողնելու մասին որոշումը կայացնելու պահն ընկած ժամանակահատվածը:»:**

Ընդ որում հոդվածում օգտագործվող «ընթացքը շարունակվում է» բառակապակցությունը ևս փաստացի կասեցում է իրենից ենթադրում, պարզապես այն տարբերությամբ, որ առանց քննության թողնելու մասին որոշում կայացվելուց հետո էլ բացառված է ժամկետի մինչև վեց ամիս երկարածությունը:

7. Հայցային վաղեմությունը պաշտպանում է պարտավոր անձի շահը, որի առկայության մասին կարող է վկայել ոչ թե ինքնին գույքի՝ տնտեսությունում գտնվելը, այլ ցուցաբերվող անհրաժեշտ հոգածությունը:

Ուստի, հայցային վաղեմության ժամկետը չպետք է տարածել սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի խախտման վերացման պահանջների վրա, եթե այդ խախտումները կապված չեն եղել գույքն այլ անձի տիրապետմանն անցնելու հետ:

Այսպիսով, առաջարկում ենք ՔՕ 344-րդ հոդվածի 4-րդ մասում հստակեցնել, որ **հայցային վաղեմության ժամկետը չի տարածվում սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի խախտման վերացման պահանջների վրա, եթե այդ խախտումները կապված չեն եղել գույքն այլ անձի տիրապետմանն անցնելու հետ:**

**Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1.«Հայցային վաղեմության ինստիտուտի էությունը», Երևանի պետական համալսարան, Իրավագիտության ֆակուլտետ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2(2) 2018, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2019, 101-121 էջեր:

2. «Հայցային վաղեմության ժամկետի կիրառությունը նեգատոր և

վինդիկացիոն հայցերի նկատմամբ», Պետություն և իրավունք, N 2(87), 2020, ԵՊՀ հրատ., Երևան, 19-31 էջեր:

3. «Հայցն առանց քննության թողնելու դեպքում հայցային վաղեմության ժամկետի կիրառության որոշ հիմահարցեր», Դատական իշխանություն, սեպտեմբեր-հոկտեմբեր 2020 9-10 (255-256), Երևան, 40-49 էջեր:

4. «Հայցային վաղեմության ժամկետը սեփականության իրավունքի ճանաչման հայցերով», Դատական իշխանություն, նոյեմբեր-դեկտեմբեր 2020 11-12 (257-258), Երևան, 38-48 էջեր:

5. «Հայցային վաղեմության կիրառումն իրավունքների ինքնապաշտպանության դեպքում», Պետություն և իրավունք, N 3 (88), 2020, ԵՊՀ հրատ., Երևան, 27-37 էջեր:

6. «Հայցային վաղեմության կիրառումը իրավունքների պաշտպանության յուրիսդիկցիոն միջոցների պարագայում», Դատական իշխանություն, հունվար-փետրվար 2021 1-2 (259-260), Երևան, 52-61 էջեր:

7. «Հայցային վաղեմության ժամկետի ընդհատումը՝ պարտքի ճանաչումը վկայող գործողություններ կատարելով», Պետություն և իրավունք, N 3 (91), 2021, ԵՊՀ հրատ., Երևան, 86-94 էջեր:

**КРИСТИНЕ АРАЕВНА ГАБУЗЯН**  
**ГРАЖДАНСКО-ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ИСКОВОЙ ДАВНОСТИ**  
**В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

Хотя исковая давность является одним из самых ранних известных институтов гражданского права (с периода древнеримского права), тем не менее до сих пор существующие нормы относительно исковой давности воспринимаются неоднозначно и порождают различные толкования, о чем свидетельствует и неоднозначная, часто противоречивая судебная практика: возникают проблемы в связи с правильным исчислением сроков исковой давности, их применимостью к определенным правоотношениям и т.п.

Между тем подобная неопределенность недопустима, особенно учитывая значение института исковой давности, его взаимосвязь с другими институтами, регулирующими гражданско-правовые отношения, и влияние на возможность осуществления защиты прав.

Кроме того, несмотря на то, что исковая давность является одним из древнейших институтов гражданского права, на протяжении времени существующие регулирования практически не претерпели изменений, в результате чего в Гражданском кодексе содержатся устаревшие нормы, не имеющие практического применения, противоречивые положения, а некоторые правоотношения вовсе исключены из законодательного регулирования с вытекающими последствиями.

Все это свидетельствует о необходимости нормативного регулирования института исковой давности, отвечающего требованиям времени и интересам сторон правоотношений, участников гражданского оборота и всего общества, а также принципу правовой определенности, что в совокупности с другими указанными выше проблемами определяет необходимость комплексного изучения института исковой давности, а значит, и актуальность темы.

Научная новизна диссертации заключается в том, что впервые в отечественной юриспруденции вопросы, связанные с исковой давностью, становятся предметом всестороннего изучения и анализа. На основе анализа различных мнений высказанных в теории, отечественного и зарубежного законодательства, международно-правовых регулирований и судебной

практики выявлена сущность исковой давности, в соответствии с современной правовой системой по-новому сформулированы цели института исковой давности, понятие исковой давности. Изучены и выявлены проблемы, возникающие в ходе практического применения сроков исковой давности, внесены предложения по расширению сферы применения исковой давности, по изменению порядка исчисления и определению особенностей применения исковой давности по отдельным требованиям.

В работе были предложены новые подходы и механизмы решения проблем, возникших в теории и в ходе практического применения данного института. В результате были сделаны как теоретические выводы, так и предложения, направленные на совершенствование законодательства.

Теоретическая значимость исследования заключается в комплексном и углубленном характере анализа института исковой давности, выделении основных тенденций развития этого института и предложении таких трактовок и регулирований, которые позволят применять указанный институт в соответствии с требованиями гражданского оборота, целями и сущностью исковой давности.

Представленные анализы, интерпретации, заключения и предложения сделанные на их основе могут иметь важное значение для развития цивилистической науки. Проведенный в диссертации анализ дополняет теорию исковой давности, а выводы, заключения, являющиеся результатом исследования, могут быть использованы в дальнейших изучениях вопроса, в дискуссиях, в учебном процессе, в правотворческой деятельности для усовершенствования законодательства, устранения пробелов, недостатков и противоречий, а также формирования единой правоприменительной практики, свободной от противоречий.

Основные положения исследования отражены в опубликованных автором научных статьях, а также были представлены на различных научных конференциях.



**KRISTINE ARA GABUZYAN**  
**CIVIL-LEGAL REGULATION OF LIMITATION PERIODS**  
**IN THE REPUBLIC OF ARMENIA**

Although the limitation period is one of the earliest known institutions of civil law (from the period of ancient Roman law), nevertheless, the existing rules regarding the limitation period are still perceived ambiguously and give rise to different interpretations, which is also evidenced by ambiguous, often contradictory judicial practice: problems arise in connection with the correct calculation of limitation periods, their applicability to certain legal relations, etc.

Meanwhile, such uncertainty is unacceptable, especially considering the importance of the institution of limitation periods, its correlation with other institutions regulating civil law relations, and its impact on the possibility of protecting rights.

In addition, despite the fact that the limitation period is one of the oldest institutions of civil law, the existing regulations have undergone virtually no changes over time, as a result of which the Civil Code contains outdated norms that have no practical application, contradictory provisions, and some legal relations are completely excluded from legislative regulation with all the ensuing consequences.

All this indicates the need for such a normative regulation of the institution of limitation period that meets the requirements of the time and the interests of the parties to legal relations, participants of civil circulation and the entire public, as well as the principle of legal certainty, which, together with other issues mentioned above, determines the need for a comprehensive study of the institution of limitation period, and therefore the relevance of the topic.

The scientific novelty of the dissertation lies in the fact that for the first time in domestic jurisprudence, issues related to the limitation period are becoming the subject of comprehensive study and analysis. Based on the analysis of various opinions expressed in theory, domestic and foreign legislation, international legal regulations and judicial practice, the essence of the limitation period is revealed, in accordance with the modern legal system the goals of the institution of limitation period and the concept of limitation period are formulated in a new way. Problems that arise during the practical application of the limitation period have been studied and identified, proposals have been made for expanding the

scope of application of the limitation periods, changing the rules of calculation and determining the specifics of the application of the limitation periods for individual claims.

The research proposes new approaches and mechanisms for solving the issues that arose in theory and during the practical application of this institution. As a result, both theoretical conclusions and proposals aimed at improving legislation were made.

The theoretical significance of the study lies in the comprehensive and in-depth nature of the analysis of the institution of limitation period, highlighting the main trends in the development of this institution and proposing such interpretations and regulations that will allow the application of this institution in accordance with the requirements of civil circulation, the goals and essence of the limitation period.

The presented analyses, interpretations, conclusions and proposals made on their basis can be important for the development of legal science in civil law. The analysis carried out in the dissertation complements the theory of limitation periods, and the findings and conclusions resulting from the research can be used in further studies of the issue, in discussions, in the educational processes, in law-making activities to improve legislation, eliminate gaps, shortcomings and contradictions, as well as to form uniform law enforcement practice, free from contradictions.

The main provisions of the thesis are reflected in scientific articles published by the author, and were also presented at various scientific conferences.



